ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 փետրվարի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

10
(3219)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱՐԾԱՐԾԻ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՐՑԸ

ՀՀ-ից Բաքու մեկնող ԱՄՆ փոխնախագահը հայտարարեց, որ Ադրբեջանում իր հանդիպումների ընթացքում կարծարծի հայ գերիների ազատ արձակման հարցը.

«Դա, անկասկած, կքննարկվի: Մենք շատ լավ հարաբերություններ ունենք թե՛ այստեղ՝ վարչապետի, եւ թե՛ Ադրբեջանի նախագահի հետ: Իրականում երեկ լսեցի վարչապետի խոսքը. նա խաղաղության համաձայնագրի հարցում լավատես է՝ հաշվի առնելով, թե որտեղ ենք այժմ՝ համեմատած ընդամենը մի քանի ամիս առաջվա հետ: Այդ պատճառով մենք, անշուշտ, կբարձրացնենք մի շարք հարցեր, սակայն կարծում եմ՝ շարունակելու ենք արդյունավետ ու հաջող համագործակցությունը թե՛ ադրբեջանցիների, թե՛ հայերի հետ»:



«Ռազմական գործողությունների հետեւանքով ստեղծված պայմաններում եւ հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին» օրինագիծն ու կից մի շարք օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ նախատեսող օրենսդրական փաթեթն առաջին ընթերցմամբ քննարկման է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը: Սահմանվում են անհայտ կորած անձի, ինչպես նաեւ նրա ընտանիքի անդամների իրավունքները, այդ թվում՝ անհայտ կորած անձի անհետացման պատճառների եւ հանգամանքների, գտնվելու դեպքում՝ գտնվելու վայրի, մահվան դեպքում՝ մահվան հանգամանքների, հուղարկավորման վերաբերյալ հավաստի տեղեկություններ ստանալու, մարմինը (մասունքները) ստանալու իրավունքը եւ այլն: Սահմանվում են անհայտ կորած անձի հետախուզման համար դիմում ներկայացնելու ընթացակարգը, հետախուզման գործընթացին առնչվող դրույթները, հետախուզման դադարեցման դեպքերը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Armlur.am-ը տեղեկացավ, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ միջգերատեսչական աշխատանքային խումբ է ստեղծվել: Մենք տեղեկացանք, որ աշխատանքային խումբը ստեղծել են զորակոչային տարիքի քաղաքացիների եւ զինծառայողների դատաբժշկական փորձաքննության գործընթացի հետ կապված խնդիրներն ուսումնասիրող եւ համապատասխան լուծման առաջարկներ ներկայացնելու համար: ArmLur.am-ի տեղեկություններով՝ այժմ քննարկվում է, թե ովքեր են լինելու խմբի կազմում: Նախատեսված է, որ կլինի պաշտոնյա ՀՀ առողջապահության նախարարությունից՝ նախարարի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ եւ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալ: Առաջիկա օրերին պետք է աշխատանքային խումբը վերջնական տեղավորվի եւ սկսի իր աշխատանքները:

Պաշտոնական այցով ՀՀ-ում գտնվող ԱՄՆ փոխնախագահ Ջեյմս Դի Վենսը երեկ՝ վաղ առավոտյան, այցելեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշակոթող՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ նրան որեւէ բարձրաստիճան պաշտոնյա հարկ չհամարեց ուղեկցել: Վենսը տիկնոջ՝ Ուշա Վենսի հետ էր այցելել հուշահամալիր: Ըստ պաշտոնական հայտարարության՝ ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյային ուղեկցել է ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: ArmLur.am-ի հարցին, թե ինչու որեւէ բարձրաստիճան պաշտոնյա չուղեկցեց ՀՀ-ում գտնվող ԱՄՆ փոխնախագահին, ՀՀ կառավարությունից փոխանցեցին. «Արարողակարգով պայմանավորված ուղեկցել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը»:

⇨ ***էջ 3***

ԶՐՈՒՅՑ

«ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ ԳՈՐԾՈՂ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ»

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի եւ Նիկոլ Փաշինյանի՝ փետրվարի 9-ին տեղի ունեցած հանդիպման, հանդիպումից սպասվող հնարավոր քաղաքական զարգացումների, Եկեղեցի-պետություն փոխհարաբերության եւ դրա շրջանակներում կատարվող իրավախախտումների, Բաքվում պահվող հայ ռազմագերիների հնարավոր վերադարձի այս եւ այլ հարցերի վերաբերյալ զրուցել ենք իրավապաշտպան Կարապետ Պողոսյանի հետ:



-Պարոն Պողոսյան, այս օրերին ի՞նչ տրամադրություններ են Գյումրիում, երբ կալանավորված է քաղաքապետ Վարդան Ղուկասյանը: Գյումրեցիներն ինչպե՞ս են հետեւում Երեւանում եւ առհասարակ հանրապետությունում տեղի ունեցող իրադարձություններին:

-Բնականաբար, Գյումրին թերեւս գտնվում է ՀՀ-ում եւ, բնականաբար, Հայաստանում տեղի ունեցող այս վայրէջքները չեն կարող անմասն թողնել գյումրեցիներին: Առավել եւս, որ Գյումրին՝ իր բնույթով, մշակույթով, ՀՀ-ում մշտապես պրպտող քաղաք է եղել, եւ այս պարագայում սարսափելի մեծ հիասթափություններ են: Հիասթափություններ կան գործող իշխանությունից, ինչու չէ՝ նաեւ ընդդիմությունից: Առհասարակ, շատ վատ տրամադրություններ, որոնք ապրել են գյումրեցիները դեռ 2020 թվականից: Հիասթափություններն առավել խորացան Արցախի հանձնումից հետո՝ տեսնելով արցախցիների տնից-տեղից կտրված լինելը: Գյումրեցիներից լավ ոչ մեկ չի կարող հասկանալ տնավեր եղած մարդկանց: Ցավոք սրտի, շատ անկումային է, շատ հիասթափեցնող, եւ դա փոխելու համար շատ կարեւոր է՝ ՀՀ-ում տեղի ունենան այնպիսի գործընթացներ, որ մարդկանց մոտ հույսեր առաջանան: Դա չի կարող լինել ընտրությունը, քանի որ նման իշխանություններին, կարծում եմ, ընտրություններով հեռացնելն անհնար է:

-Փետրվարի 9-10-ին պաշտոնական այցով Երեւանում էր ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը: Փետրվարի 9-ին նա հանդիպում ունեցավ Նիկոլ Փաշինյանի հետ: Ի՞նչ քաղաքական զարգացումների սպասել: Ի՞նչ ազդեցություն կարող է այս այցը թողնել Հայաստանի վրա:

-Նախ նշեմ, որ Վենսի այցը ես մի փոքր այլ կերպ եմ բնորոշել, ես այն անվանել եմ Վենսի արշավանքներ: Քանի որ Վենսը այստեղ գտնվում է ԱՄՆ-ի շահերը առաջ տանելու համար, եւ այս շահերի առաջտարման գործում, որպեսզի մենք ունենայինք որոշակի ձեռքբերումներ, առաջին հերթին պետք է ունենայինք մեր երկիրը ներկայացնող ղեկավար, ինչը, ցավոք, 8 տարի է՝ մենք չունենք: Հետեւաբար, եթե մենք փորձենք միամտաբար ինչ-որ լավ ակնկալիքներ ունենալ, սա զուր է: Երեկ Վենսի եւ Փաշինյանի ստորագրած փաստաթղթերից պարզ դարձավ մի բան, որ իրենք ամբողջովին ուզում են տարածաշրջանը դարձնել ամերիկյան շահերի սպասարկման միջանցք:

-Փետրվարի 5-ին Բաքուն հրապարակեց Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության եւ մյուս հայ գերիների ծանր եւ ապօրինի դատավճիռները: Երբ արդեն Բաքուն հրապարակել է դատավճիռները, ինչպե՞ս եք տեսնում նրանց հնարավոր ազատ արձակումը, հայրենիք վերադարձը: Ի՞նչ ճանապարհներով:

-Նախ ուզում եմ իրենց մասով չօգտագործենք դատավճիռ հասկացությունը, քանի որ դատավճիռ տալիս են հանցագործներին, իսկ այդ մարդիկ հանցագործ չեն, համենայնդեպս Ադրբեջանի օրենսդրության համապատասխան իրենք որեւէ հանցանք չեն գործել, որովհետեւ իրենք առնչություն չեն ունեցել Ադրբեջանի հետ, իրենք ունեցել են առնչություն Արցախի ազատ հանրապետության հետ: Պետություն, որտեղ հանցավոր գործողությունների եւ պայմանավորվածության արդյունքում կործանվեց այն, եւ այդտեղ հանցագործներ են Իլհամ Ալիեւը եւ Նիկոլ Փաշինյանը առաջնահերթ: Ինչպես նշեցինք, այո՛, իրենք գերիներ են, նրանց վերադարձնելու մեկ տարբերակ կա՝գերիներին փոխանակում են գերիների հետ: Իսկ դրան հասնելու համար մենք պետք է ազատվենք Նիկոլ Փաշինյանից:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՏՈՆՈՅԱՆԸ ԿՏՄՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՆՈՒՆԸ

Պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի եւ ՊՆ նախկին պաշտոնյաների դեմ հարուցված քրեական գործը ավարտվում է:

«Ժողովուրդ» օրաթերթին դռնփակ նիստից մանրամասներ են հայտնի դարձել. մեղադրյալների մեծ մասը իր պաշտպանական ճառը ասել է, հերթը Դավիթ Տոնոյանինն է, եւ նա պատրաստվում է պաշտպանական ճառին:

Կարճ ժամանակ անց դատավոր Վահե Դոլմազյանը կգնա որոշում կայացնելու:

Հիշեցնենք, որ ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցվել էր քրեական գործ՝ ռազմամթերքի ձեռքբերման գործընթացում ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ: Քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել յոթ անձի, այդ թվում՝ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, ՀՀ ՋՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյանին, ՋՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին:

Գործը Հակակոռուպցիոն դատարանում քննվում է դռնփակ շուրջ 4 տարի եւ հասել է ավարտին:

Ինչպես հայտնի է, Ազգային Ժողովի աշխատակազմից մերժել էին պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի խնդրանքը՝ ծանոթանալու 44-օրյայի քննիչ հանձնաժողովի զեկույցին: Խորհրդարանից հիմնավորել են, թե զեկույցը չի կարող հասանելի լինել Տոնոյանին, քանի որ այն իրավական կարգավիճակ չունի:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԶՆՆՎԵԼՈՒ

Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվելիք TRIPP «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» ճանապարհի վրա, ինչպես Հայաստանի ամբողջ տարածքում, գործելու են ԵԱՏՄ մաքսային իրավական համակարգերը: Այս մասին մամուլի ասուլիսի ընթացքում հայտնեց ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Էդուարդ Հակոբյանը:

ՊԵԿ նախագահը պարզաբանեց նաեւ, թե ինչպես կարող են զննվել այդ ճանապարհով անցնող ադրբեջանական բեռները:

«Մենք շատ շուտով ունենալու ենք մոնիտորինգի կենտրոն, որը միանալու է ցամաքային կետերում մեր ռենտգեն համակարգերին, թույլ է տալու հեռավար տարբերակով վերլուծել անցնող բեռները եւ ընտրել թիրախները, թե ինչն է պետք զննել: Եթե ինչ-որ տեղ կասկածելի բան բացահայտվի, իհարկե, կարիք կլինի մարդկային միջամտության: Այդ դեպքում «Ֆրոնտ-օֆիս»-ի աշխատակիցը դուրս է գալու, կատարելու է զննում կամ այլ գործառույթներ: Այս համակարգը թույլ է տալիս քիչ շփվել այն մարդկանց հետ, որոնք սահմանն անցնում են: TRIPP-ի դեպքում այս նույն մոտեցումն է այս պահին քննարկվում»,- ասաց Հակոբյանը:

Հիշեցնենք, որ հունվարի 13-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը եւ ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն հանդիպել են Վաշինգտոնում՝ հրապարակելու «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» նախագծի (TRIPP) իրականացման շրջանակը:

Շրջանակն ուրվագծում է TRIPP-ի գործարկման կոնկրետ ուղին, որը նախատեսված է Հայաստանի տարածքով անխոչընդոտ, մուլտիմոդալ տարանցիկ փոխկապակցվածության հաստատման համար: Կապելով Ադրբեջանի հիմնական մասն իր Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության հետ եւ ստեղծելով Տրանս-Կասպյան առեւտրային երթուղու կենսական օղակ՝ ակնկալվում է, որ TRIPP-ը միջազգային եւ ներպետական փոխկապակցվածության փոխադարձ առավելություններ կստեղծի Հայաստանի Հանրապետության համար:

Արտացոլելով 2025 թվականի օգոստոսի 8-ին նախագահ Թրամփի կողմից հյուրընկալած պատմական խաղաղության գագաթաժողովում հաստատված սկզբունքները՝ TRIPP-ի իրականացման շրջանակն ընդգծում է ինքնիշխանության, տարածքային ամբողջականության եւ փոխադարձության կարեւորությունը TRIPP-ի ընդհանուր հաջողության համար: TRIPP-ի վերջնական նպատակն է ամրապնդել Հայաստանի եւ Ադրբեջանի բարգավաճումն ու անվտանգությունը եւ խթանել ամերիկյան առեւտուրն՝ ընդլայնելով տարածաշրջանային առեւտուրն ու փոխկապվածությունը, ինչպես նաեւ ստեղծելով Կենտրոնական Ասիան եւ Կասպից ծովը Եվրոպային կապող նոր տարանցիկ հնարավորություններ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿՈԲԱԽԻԶԵՆ ՀՈՒՅՍ Է ՀԱՅՏՆԵԼ

Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն Բրյուսելի կողմից երկակի ստանդարտների եւս մեկ դրսեւորում է անվանել Եվրամիության փորձերը՝ Ռուսաստանի հետ ուղիղ երկխոսություն հաստատելու՝ միաժամանակ անտեսելով Վրաստանի հետ երկխոսությունը:

«Եվրոպական բյուրոկրատիան սկսել է խոսել Ռուսաստանի հետ ուղիղ երկխոսության անհրաժեշտության մասին, սակայն Վրաստանի հետ երկխոսությունը, որը Բրյուսելը դադարեցրել էր Թբիլիսիի ենթադրաբար ռուսամետ կառավարության պատճառով, դեռեւս չի վերականգնվել: Սա երկակի ստանդարտ է»,-երեքշաբթի օրը լրագրողներին ասել է Կոբախիձեն:

Նա հույս է հայտնել, որ Ռուսաստանի հետ երկխոսությունը վերականգնելուց հետո Եվրամիությունը կվերականգնի նաեւ Վրաստանի հետ ուղիղ երկխոսությունը:

Եվրամիության եւ Վրաստանի միջեւ շփումները դադարեցվեցին 2024 թվականին, երբ իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը, որը Բրյուսելում համարվում էր ռուսամետ քաղաքական ուժ, հաղթեց խորհրդարանական ընտրություններում:

ԻՆՉԻ ՊԵՏՔ Է ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԻ

ԵՄ-ն պետք է պատրաստ լինի փոխարինելու ԱՄՆ ռազմավարական ուժերն ու հնարավորությունները Եվրոպայում եւ ստեղծելու իրական եվրոպական պաշտպանական միություն: Ինչպես տեղեկանում ենք ՏԱՍՍ գործակալությունից, այդ մասին հայտարարել է ԵՄ պաշտպանության հարցերով հանձնակատար Անդրյուս Կուբիլյուսը՝ Ստրասբուրգում ելույթ ունենալով Եվրախորհրդարանի նստաշրջանում:

«Մենք պետք է պատրաստ լինենք Եվրոպայում ԱՄՆ ռազմավարական հնարավորությունները փոխարինելու եվրոպականով. դա ռազմավարական առաջնահերթություն է: Մենք պետք է նաեւ պատրաստ լինենք փոխարինելու այն պայմանագրային ուժերը, որոնք ԱՄՆ-ն ունի Եվրոպայում. դա առաջին քայլն է դեպի եվրոպական անկախություն», - հայտարարել է նա՝ կոչ անելով վերածելու Եվրամիությունը պաշտպանական միության:

Նա նաեւ նշել է, որ Եվրամիության երկրները պետք է մինչեւ 2035 թվականի վերջը 6,8 տրիլիոն եվրո ծախսեն սպառազինության համար, եթե կատարեն ՆԱՏՕ-ի շրջանակներում իրենց պարտավորությունները՝ կապված ռազմական ծախսերը ՀՆԱ-ի 5%-ին հասցնելու հետ: Նրա խոսքով՝ Եվրահանձնաժողովը ԵՄ երկրների գլխավոր խնդիրն է համարում «արտադրել, արտադրել եւ կրկին արտադրել» զենք:

ԱՅՑԵԼԵԼ Է

ՎԵՆՍԻՆ ՉՈՒՂԵԿՑԵՑԻՆ ՃԻՃԵՌՆԱԿԱԲԵՐԴ

Պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետությունում գտնվող ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը տիկնոջ հետ այցելել էր Ցեղասպանության հուշահամալիր:

Հիշեցնենք, որ ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը տիկնոջ՝ Ուշա Վենսի հետ երկօրյա պաշտոնական այցով փետրվարի 9-ին ժամանել էր Հայաստանի Հանրապետություն: Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում ԱՄՆ փոխնախագահի գլխավորած պատվիրակությանը դիմավորել են Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը եւ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Ջեյ Դի Վենսն օդանավակայանից ուղեւորվել էր ՀՀ նախագահական նստավայր, որտեղ տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի հանդիպումը:

Պաշտոնական այցով ՀՀ-ում գտնվող ԱՄՆ փոխնախագահը երեկ՝ փետրվարի 10-ի վաղ առավոտյան, այցելեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշակոթող՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ նրան որեւէ բարձրաստիճան պաշտոնյա հարկ չհամարեց ուղեկցել: Վենսը տիկնոջ՝ Ուշա Վենսի հետ էր այցելել հուշահամալիր:

Ըստ պաշտոնական հայտարարության՝ ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյային ուղեկցել է ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

ArmLur.am-ի հարցին, թե ինչու որեւէ բարձրաստիճան պաշտոնյա չուղեկցեց ԱՄՆ փոխնախագահին, ՀՀ կառավարությունից փոխանցեցին. «Արարողակարգով պայմանավորված ուղեկցել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը»:

Բանն այն է, որ Ժաննա Անդրեասյանը, որը Ծիծեռնակաբերդում էր, ոչ թե ուղեկցում, այլ ողջունում էր պարզապես: Անդրեասյանն անգամ հարկ չի համարել հուշահամալիրի ներսում նրանց ուղեկցել, բացատրել, թե ինչ նշանակություն ունի կոթողը, սյուների թիվը, անմար կրակը: Միայն նրա համար, որ տպավորություն ստեղծվի, թե նախարարն է ուղեկցել Վենսին եւ կնոջը, պաշտոնական հաղորդագրության մեջ մի անձրեւոտ ձեռքսեղմում է հրապարակվել ընդամենը, այն էլ կիսահագնված Վենսի հետ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՏԱՆԿԵՐ Է ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼ

2026 թվականին ամերիկյան Abrams M1A2 SEPv3 տանկերի առաջին խմբաքանակն է ժամանել Լեհաստան: Ինչպես տեղեկանում ենք «Ինտերֆաքս» գործակալությունից, այդ մասին հաղորդել է Լեհաստանի պաշտպանության նախարարությանն առընթեր Սպառազինությունների գործակալությունը:

Լեհաստան է մատակարարվել քսանինը տանկ: Տեխնիկան վերջնական մշակում կանցնի Պոզնանի WZMOT զինագործարանում, որից հետո կմատակարարվի լեհական զորքի սպառազինությանը:

Լեհական բանակն արդեն ունի նախորդ տարբերակների 116 Abrams տանկ, ինչպես նաեւ իրականացվում են նոր վերափոխված տարբերակի մատակարարումներ: Նախատեսվում է լեհական զորքի սպառազինությանը մատակարարել, ընդհանուր առմամբ, 250 Abrams M1A2 SEPv3 տանկ:

Abrams M1A2S EPv3-ը տարբերվում է կոմպոզիտային զրահի կիրառմամբ, կրակի կառավարման կատարելագործված համակարգերով, բեկորաֆուգասային արկերով կրակելու կարողությամբ եւ մի շարք այլ բարելավումներով:

ԻՆՉԻ Է ՍՏԻՊՎԱԾ ԲԵԼԱՌՈՒՍԸ

Բելառուսը ներկայիս դրությամբ ստիպված կլինի ամրապնդել իր պաշտպանունակությունը: Այս մասին հայտարարել է հանրապետության նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն՝ զինված ուժերի համալրման եւ ռազմարդյունաբերական համալիրի զարգացման հարցերին նվիրված խորհրդակցության ժամանակ:

Երկրի առաջնորդի խոսքով, որը մեջբերում է «ԲելՏա» գործակալությունը, արդի պայմաններում ինքնաբավ կարող է համարվել միայն այն պետությունը, որն առաջին հերթին ի վիճակի է ապահովել ռազմական ոլորտում իր անվտանգությունը: «Ուզենք, թե չուզենք, ես վաղուց էի այդ մասին զգուշացրել բելառուս ժողովրդին, դուք առավել եւս գիտեք այդ մասին, մենք ստիպված կլինենք ամրապնդել մեր պաշտպանունակությունը», - ասել է նա:

Ինչպես նշել է Լուկաշենկոն, Բելառուսի սահմանների մոտ ռազմական բաղադրիչի ավելացումը, հատկապես Լեհաստանի կողմից, ոչ միայն անհանգստացնող է: «Մենք հասկանում ենք, որ դա հենց այնպես չի արվում: Մարդիկ հենց այնպես փող չեն ծախսում տանկերի եւ զինամթերքի վրա: Ուստի ժամանակին իմ կողմից որոշում էր կայացվել՝ հաշվի առնելով Ռուսաստանի Դաշնության հատուկ ռազմական գործողությունը, էլ ավելի լուրջ մաշտաբներով զբաղվել մեր պաշտպանունակության ամրապնդմամբ», - պարզաբանել է նախագահը:

ՎԱՐՈՒՅԹ

ՈՎ ԿԱՄ ԻՆՉՈՎ ԵՆ ՍՊԱՌՆԱՑԵԼ ՎԱՉԱԳԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

Ինչպես հայտնի է՝ Իսակովի պողոտայի 23 հասցեում գտնվող հողատարածքներն օտարելու գործով, բացի Սերժ Սարգսյանի անվտանգության նախկին պետ Վաչագան Ղազարյանից, մեղադրյալ է նաեւ մեկ այլ անձ՝ Արմեն Սարգսյանը: Նա 2005-2006 թվականների ընթացքում եղել է պաշտպանության նախարարության կապիտալ շինարարության եւ զորքերի բնակավորման վարչության պետը:

Վաչագան Ղազարյանի գործն արդեն Հակակոռուպցիոն դատարանում էր, երբ Սարգսյանի մասն ուղարկվեց դատարան, եւ այժմ այս երկու գործերը միասին են քննվում՝ դատավոր Տիգրան Դավթյանի վարույթում:

Ըստ մեղադրանքի՝ Վաչագան Ղազարյանը դիմել է պաշտպանության նախարարին՝ Սերժ Սարգսյանին, այս գործով մեղադրյալ Արմեն Սարգսյանին, ինչպես նաեւ պաշտոնատար այլ անձանց, եւ, օգտվելով նրանց հետ մտերիմ հարաբերություններ ունենալու հանգամանքից, վերջիններիս դրդել է հողային օրենսգրքի պահանջների խախտմամբ, այն է՝ հողամասն ուղղակի վաճառելու հիմքերի բացակայության պայմաններում, շուկայական արժեքից ցածր գնով Իսակովի պողոտայի 23 հասցեում գտնվող հողատարածքը վաճառել իրեն:

Այս հողատարածքի հետ կապված՝նաեւ ապօրինի գույքի բռնագանձման վարույթ է եղել Դատախազությունում: Այդ վարույթի շրջանակներում Ղազարյանը շուրջ մեկ տարի առաջ հողատարածքը վերադարձրել է պետությանը, որից հետո քրեական գործի շրջանակներում նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխվել է ազատազրկման հետ չկապված խափանման միջոցով, ու գործն ուղարկվել է դատարան՝ բուն քննության:

Թեեւ Ղազարյանը ապօրինի գույքի բռնագանձման շրջանակներում վերադարձրել է հողատարածքները՝ քրեական գործի շրջանակներում մեղադրանքը չի ընդունում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՇՆԱՄԱՐՏ

Համայնքային ոստիկանության Արտաշատի բաժնում օպերատիվ տեղեկություն էր ստացվել, որ հունվարի 28-ին Արեւշատ գյուղի 45-ամյա եւ Նշավան գյուղի 37-ամյա երկու բնակիչ Արեւշատ գյուղի հարակից դաշտում շնամարտ են կազմակերպել: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում 45-ամյա տղամարդը հրավիրվել է Արտաշատի բաժին, որտեղ բացատրական աշխատանքի արդյունքում խոստովանել է արարքը: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին: Հիշեցնենք, որ կենդանու նկատմամբ դաժան վերաբերմունքը, այդ թվում՝ կենդանիների մարտի կազմակերպումը կամ իրականացումը, քրեորեն պատժելի արարք է:

ԶԵՆՔ–ԶԻՆԱՄԹԵՐՔ

Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժնի, Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի եւ Ոստիկանության գվարդիայի 2-րդ գնդի ծառայողները համատեղ ուժեղացված ծառայության ընթացքում ապօրինի զենք-զինամթերք եւ թմրամիջոց են հայտնաբերել:

Մասնավորապես, Արշակունյաց պողոտայում հայտնաբերվել, սառը զենք պահելու եւ կրելու կասկածանքով ձերբակալվել եւ Շենգավիթի բաժին է տեղափոխվել Արարատի մարզի Այնթապ գյուղի բնակիչ 30-ամյա մի երիտասարդ: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է ծալովի դանակ:

Հաջորդ դեպքն արձանագրվել է Բագրատունյաց պողոտայում. ապօրինի զենք-ռազմամթերք պահելու եւ կրելու կասկածանքով ձերբակալվել եւ Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին է տեղափոխվել Երեւանի բնակիչ 36-ամյա մի երիտասարդ, որի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է օդաճնշիչ ատրճանակ: Սառը զենք պահելու եւ կրելու հերթական դեպքը դարձյալ գրանցվել է Բագրատունյաց պողոտայում: Շենգավիթի բաժին տեղափոխված Արարատի մարզի Բյուրավան գյուղի 36-ամյա բնակչի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է ներկառուցված դանակով կռփազենք: Համատեղ ուժեղացված ծառայության ընթացքում բացահայտվել է նաեւ թմրամիջոց պահելու եւ օգտագործելու դեպք:

Արշակունյաց պողոտայում հայտնաբերվել, ձերբակալվել եւ բաժին են տեղափոխել 17 եւ 33 տարեկան երկու երիտասարդ՝ «Շեւրոլե» ավտոմեքենայով հանդերձ, որի սրահի ակնհայտ տեսանելի հատվածում կիսամոխրացած հետքերով կաթուցիչ կար: 33-ամյա երիտասարդի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է շոկո թմրամիջոցի նմանվող զանգվածով փաթեթ:

Բոլոր դեպքերով կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

ԹՄՐԱՄԻՋՈՑ

Համայնքային ոստիկանության Արտաշատի բաժնի ծառայողները փետրվարի 6-ին օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Մրգավան գյուղի 47-ամյա բնակիչը պահում եւ օգտագործում է թմրանյութ: Մրգավան մեկնած համայնքային ոստիկանները պարզել են, որ տեղեկությունը հավաստի է: Բացատրական աշխատանքի արդյունքում 47-ամյա տղամարդը ներկայացրել է ընդհանուր 250 գրամ մարիխուանա տեսակի թմրանյութի նմանվող զանգվածով ապակյա տարաներ:Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

ՄԱՀՎԱՆ ԵԼՔՈՎ

Փետրվարի 10-ին մահվան ելքով վրաերթ է տեղի ունեցել Արարատի մարզում: Ժամը 12:40-ի սահմաններում 61-ամյա Սեմիոն Բ.-ն իր վարած «MAN» մակնիշի բեռնատարով Երեւան-Երասխ ավտոճանապարհի Մ2 մայրուղու Արտաշատ քաղաքի վարչական տարածքում՝ «Վան» ռեստորանային համալիրի մոտ, վրաերթի է ենթարկել հետիոտն, Արարատի մարզի բնակիչ 80-ամյա Կ. Մարտիկյանին: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վարորդը փախուստի չի դիմել, ահազանգել է շտապօգնություն եւ օպերատիվորեն ժամանած «Արտաշատ» բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը արձանագրել է հետիոտնի մահը: Դեպքի վայր են ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Արարատի մարզի գումարտակի 1-ին վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Գեւորգ Զաքարյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Հայկ Հակոբյանի եւ գումարտակի ծառայության ավագ տեսուչ Սահակ Թադեւոսյանի գլխավորությամբ: Վթարի մասին ՊԾ Արարատի մարզի գումարտակից տեղեկությունը փոխանցել են ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչություն, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ վարչության պետ Տիգրան Մելիքյանի վարչության պետի տեղակալ Ներսես Մուրադյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ: Դեպքի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Քննիչի հանձնարարականով ավտոմեքենան տեղափոխվել է ոստիկանության Արտաշատի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

ԼՈՒՐԵՐ

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂՆԵՐԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ

Համայնքային ոստիկանության Նուբարաշենի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փետրվարի 6-ին Խաղաղ Դոնի փողոցի հասցեներից մեկի մոտ հայտնաբերել, ձերբակալել եւ բաժին են տարել 56-ամյա մի տղամարդու, որը փետրվարի 3-ից Համայնքային ոստիկանության Մարաշի բաժնի կողմից հետախուզվում էր պատժի կրումից խուսափելու համար. խափանման միջոցը՝ կալանք: Նա տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

***

Համայնքային ոստիկանության Բաղումի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ բացատրական աշխատանքի արդյունքում փետրվարի 6-ին բաժին է ներկայացել Լորուտ գյուղի բնակիչ 40-ամյա մի տղամարդ, որը հետախուզվում էր անզգուշությամբ մեկ ուրիշին կյանքից զրկելու մեղադրանքով. խափանման միջոցը՝կալանք: Նա տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Համայնքային ոստիկանության Եղեգնաձորի բաժին հաղորդում էր ստացվել, որ փետրվարի 6-ի ժամը 17-ից փետրվարի 7-ի ժամը 8-ն ընկած ժամանակահատվածում Ագարակաձոր գյուղի փողոցներից գողացել են համայնքին պատկանող ցինկե խողովակներ եւ կիսախողովակներ: Համայնքային ոստիկանների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ գողությունը կատարել է Մալիշկա գյուղի 66-ամյա բնակիչը եւ իրեն պատկանող «ԶԱԶ» բեռնատարով տեղափոխել իր բնակության հասցե: Հետագա միջոցառումներով պարզվել է, որ նույն ժամանակահատվածում Գետափ գյուղի բնակիչ 21-ամյա երիտասարդը Ագարակաձորի բնակիչներից մեկի հողամասից գողացել է 3 ցինկե խողովակ եւ վաճառել Մալիշկայի 66-ամյա բնակչին: 66-ամյա եւ 21-ամյա տղամարդիկ հրավիրվել են Եղեգնաձորի բաժին եւ խոստովանել իրենց արարքը:

ԱՎՏՈՎԹԱՐ

Երեկ՝ փետրվարի 10-ին, ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Արագածոտնի մարզում: Ժամը 11:30-ի սահմաններում Ալագյազ-Ջամշլու ճանապարհին բախվել են «Ford Transit» եւ «ՎԱԶ 21015» մակնիշի ավտոմեքենաները: Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով 1 հոգի տեղում մահացել է, 2 վիրավորներից մեկը տեղափոխվել է «Ապարան» բժշկական կենտրոն, մյուսը՝ «Ծաղկահովիտ» բժշկական կենտրոն: Վթարի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզում են ավտոմեքենաների սեփականատերերի, վարորդների, մահացածի եւ վիրավորի ինքնությունը: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ մահացածը վարորդներից մեկի մայրն է: Դեպքի վայրում հավաքված քաղաքացիները նշում էին, որ ճանապարհին ամբողջությամբ եղել է մերկասառույց, եւ վթարից որոշ ժամանակ անց են սկսել աղ ու ավազի խառնուրդով մշակել այն: Երկու ավտոմեքենաներն էլ եղել են ձմեռային անվադողերով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հանրապետությունում փետրվարի 9-ից 10-ը բացահայտվել է 147 հանցագործություն, որոնցից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

Ե՞ՐԲ ԵՔ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ

Դիլիջան համայնքի ավագանու հունվարի 12-ի նիստում Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը առաջարկություն է ներկայացրել Դիլիջան քաղաքի Տ. Պետրոսյան փողոց թիվ 1/1 հասցեից մինչեւ Ե. Շամախյան փողոց թիվ 1/3 հասցեն անվանակոչել հայ բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս Ավետիք Իսահակյանի անվամբ: Ավագանին 11 կողմով ընդունել է համայնքի ղեկավարի առաջարկը, քվեարկության ժամանակ դեմ, ձեռնպահ չի եղել:

Նույն նիստում համայնքի ղեկավար Դ. Սարգսյանը առաջարկություն է ներկայացրել Դիլիջան քաղաքի Ֆ. Վասիլեւի փողոցի թիվ 56 հասցեից մինչեւ թիվ 116/3 հասցեն անվանակոչել հայ ականավոր բանաստեղծ, մշակութային գործիչ, գրականագետ, թարգմանիչ Պարույր Սեւակի անվամբ: Վերստին նիստին մասնակցող ավագանու բոլոր 11 անդամները կողմ են քվեարկել համայնքապետի առաջարկին:

2025թ. դեկտեմբերի 5-ին կայացած Դիլիջան համայնքի ավագանու հերթական նիստում Դիլիջան համայնքի ավագանու անդամ, ավագանու «Հանրապետություն» կուսակցության խմբակցության ղեկավար Նունե Սանթրոսյանը առաջարկություն է ներկայացրել Դիլիջան քաղաքի Կամարինի փողոցը եւ նրբանցքը անվանակոչել Արտուշ Սահակյանի անվամբ: Նիստին մասնակցող ավագանու բոլոր անդամները միակամ՝ 11 կողմով որոշել են համաձայնություն տալ Դիլիջան քաղաքի Կամարինի փողոցը եւ նրբանցքը անվանակոչել «Վաստակավոր ուսուցիչ», «Լավագույն ուսուցիչ» եւ մի շարք այլ բարձր կոչումների արժանացած Արտուշ Սահակյանի անվամբ՝սերունդների կրթության եւ դաստիարակության գործում ունեցած մեծ ավանդի համար եւ ծննդյան 100-ամյա հոբելյանի առթիվ:

Դիլիջանի համայնքապետարանը հայտնում է, որ առաջիկայում կքննարկվեն նաեւ Դիլիջան քաղաքի մի շարք այլ փողոցների անվանափոխություններին վերաբերող առաջարկություններ, որոնք կներկայացվեն հասարակական քննարկման եւ ավագանու հաստատման: Դիլիջան քաղաքում կան բոլշեւիկ ղեկավար, մանկապիղծ Միխայիլ Կալինինի, Կամոյի, Խորհուրդների եւ այլ փողոցներ, որոնք անվանափոխման կարիք ունեն, սակայն Հայաստանի անկախացումից հետո՝ անցած 35 տարում, դրանց անվանումները չեն փոխվել:

Խորհրդային շրջանի իրադարձությունների, խորհրդային գործիչների անվանումներով փողոցներ կան նաեւ Տավուշի մարզի մյուս քաղաքներում: Նոյեմբերյան քաղաքի անվանումը 1917թ. բոլշեւիկյան հեղափոխության ամսից (նոր տոմարով՝ նոյեմբերի 7) է, Նոյեմբերյան քաղաքում կա Նոյեմբերի 29-ի փողոց, նոյեմբերի 29-ը 1920թ. 11-րդ Կարմիր բանակի կողմից Հայաստանի օկուպացիայի սկզբի օրն է: Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքում կա Մայիսի 28-ի փողոց՝ ի պատիվ 1920թ. անկախ Հայաստանում հայ բոլշեւիկների խռովության օրվա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՀԱՋԱՆԳ

ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

ՀՀ Կոտայքի մարզի Քասախ համայնքում թափառող շների խնդիրը չի լուծվում: Այս մասին մեզ ահազանգում են Քասախի բնակիչները: Նրանք մեզ հայտնում են, որ թափառող շները չստերջացված են: Թափառող շների ոհմակին հանդիպում են Քասախի բոլոր փողոցներում:

«Սաղ գյուղն էլ էդ ա, շներ են, գյուղով մեկ թափառում են: Երեխաներին վախենում ենք մենակ տեղ ուղարկել: Կանայք էլ են վախենում, փոքր երեխան չի՞ վախենալու: Ո՛չ ստերջացված ա, ո՛չ հսկում են էդ շներին: Մեկին որ կծեն, պատասխանը տալո՞ւ են»,- վրդովված ասաց մեզ ահազանգած քաղաքացին:

Մենք հետաքրքրվեցինք, թե եղել են դեպքեր, որ շները հարձակվեն մարդկանց վրա, քաղաքացին պատասխանեց հետեւյալ կերպ. «Պարտադի՞ր ա մարդու կծեն, որ գան, խնդիրը լուծեն: Քանի դեպք չի եղել, էս խնդիրը լուծել ա պետք»:

Քասախի բնակիչը նաեւ մեզ տեղեկացրեց այլ խնդրի մասին: Նրա խոսքով՝ համայնքում հոսանքի տատանումներ հաճախ են լինում, հատկապես վատ եղանակի դեպքում:

«Չեմ կարող ասել՝ խնդիրը որն է, քանի որ ես մասնագետ չեմ, չեմ կարող ասել՝ մալուխները հին են, թե չէ, բայց ամեն ձյուն, անձրեւ տեղալուց մեր հոսանքը անջատվում ա, լինում ա՝ օրը մի քանի անգամ անաջատվում-միանում ա: Տեխնիկա է փչանում: Իմ տեխնիկան փչացել է»,- վրդովված ասաց քաղաքացին՝ հավելելով, որ այսպես՝խնդիրը չլուծելով, մեկը երկուս է դառնալու:

Մեզ ահազանգած քաղաքացին տեղեկացնում է նաեւ այն մասին, որ տրանսպորտի խնդիր էլ ունեն: Տրանսպորտը, ինչպես ամիսներ առաջ հայտարարվեց, գյուղ չի մտնելու:

«Հոգնած աշխատանքից գալիս ենք, մեկ էլ էդտեղից քայլելով պիտի գնանք հասնենք մեր տները: Իմ տնից 10-15 րոպե հեռավորություն է, բայց մարդ կա գյուղի ծերը պիտի հասնի»,- ասաց նա:

ArmLur.am-ը պարզաբանում ստանալու համար դիմեց Քասախի վարչական ղեկավար Արտակ Թովմասյանին: Նրանից պատասխան մեզ չհաջողվեց ստանալ: Քասախի համայնքապետարանից արձագանք ստանալուն պես՝ կհրապարակենք:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ

«Ամիսներ առաջ հայտարարել եմ «Առաջարկ Հայաստանին» ծրագրի մեկնարկը, համոզված լինելով, որ պետությունները կորուստներից հետո վերականգնվում են ծրագրերի, գաղափարների, կամքի եւ երկրին նվիրված, ունակ մարդկանց համախմբման շնորհիվ»,- ֆեյսբուքյան իր էջում գրել է Գագիկ Ծառուկյանը:

«Սա վերկուսակցական նախաձեռնություն է, մեր քաղաքացիների մասին եւ նրանց մասնակցությամբ կազմվող ծրագիր: Այստեղ պիտի համախմբվեն մեր քաղաքացիների, ոլորտային լավագույն մասնագետների, գործիչների, հանրային դեմքերի, սրտացավ ու կարող մարդկանց գաղափարները՝ երկիրն այս վիճակից դուրս բերելու եւ հետպատերազմյան վերականգնման գնալու միասնական նպատակով:

Ձեւաչափի մասին

«Առաջարկ Հայաստանին» գաղափարը Նոյյան տապանի պես մի բան է: Միայնակ փրկվել հնարավոր չէ: Ոչ մի անհատ, ոչ մի կուսակցություն, ոչ մի դաշինք միայնակ չի կարող մեծ արդյունքի հասնել: Մեր խնդիրներն այնքան խորն են, վիճակը՝ այնքան բարդ, որ այլ մոտեցում է պետք: Եթե ուզում ենք դուրս գալ այս վիճակից, գնալ հետպատերազմյան վերականգնման, վերականգնել մեր ազգային արժանապատվությունը, բոլոր ոլորտներում ապահովել աճ, ունենալ բարեկեցիկ, բարգավաճ Հայաստան, ոտքի կանգնող հայկական աշխարհ, ապա պետք է ստեղծենք պետական, գիտական, մասնագիտական մտքի «նոյյան տապան», որտեղ կուսակցական պատկանելությունը ոչ մի նշանակություն չունի, որտեղ հարգի են գիտելիքը, սկզբունքները, մարդկային որակները եւ պատրաստակամությունը՝ թեկուզ անձնապես տուժել, բայց օգնել երկրին:

Ես մտադիր եմ իսկապես քաղաքական, հանրային Նոյյան տապան ստեղծել, որտեղ կհավաքվեն բոլոր հետաքրքիր առաջարկները, գաղափարները, լուծումները, որտեղ ամեն մարդ կգտնի իր անելիքը, իր տեղը, երկրին օգուտ տալու իր ձեւը:

Ինչպես Նոյը տեսավ փրկության եւ վերածննդի ճանապարհը, նույնը մենք պիտի փորձենք անել այսօր:

Ես անելու եմ այնպես, որ բոլոր ունակ մարդիկ, կամք, սկզբունքներ ունեցող, աշխատելու ցանկություն ունեցող գործիչներն ունենան իրենց կարեւոր տեղն այն թիմում, որն ընտրությունների կգնա «Առաջարկ Հայաստանին» ծրագրով:

Խնդիրները շատ են, ծանր են, բայց մենք դրանց պիտի նայենք որպես փորձություն, որը մեզ այս կյանքում տրվել է հաղթահարման համար: Եթե պիտի վախենանք մեր սեփական երկրի խնդիրները լուծելուց, ապա ո՞ւմ ենք դրանք թողնում: Մենք կարող ենք եւ պարտավոր ենք դրանք լուծել: Ուժերի համախմբումը, իրար լսելու ունակությունը, ներքին համերաշխությունը, կարող-ունակ մարդուն գնահատելու մեր վճռականությունը կբերեն լուրջ արդյունքների: Ես ձեւաչափը պատկերացնում են այդպես. անկախ իրավական լուծումից՝այն պետք է լինի կարող անհատների «Նոյյան Տապան», որը սկիզբ կդնի նոր կյանքի, նոր հաջողությունների:

Նախընտրական ցուցակի մասին

Այսքան ժամանակ որեւէ մեկն ինձ չի դիմել ցուցակում այս կամ այն տեղը զբաղեցնելու համար: Ինձ համար սա շատ կարեւոր է: Ես իմ մեջ ունեի որոշում, որ ով էլ դիմեր նման հարցով՝անկախ իր արժեքից, իր գիտելիքներից, ասելու էի՝ցտեսություն, քեզ համար տեղ չկա: Հիմա մանդատակռվի ժամանակը չէ:

Ես ուզում եմ ամենակարեւոր սկզբունքն արձանագրենք.

պաշտոնը չի կարեւոր, երկիրն է կարեւոր, մանդատը չի կարեւոր, աշխատանքի արդյունքն է կարեւոր:

Եվ հիմա հայտարարում եմ.

Պատրաստ եմ ստեղծելու հնարավորություններ՝ գիտելիք, սկզբունքներ, կամք, ունակություն, աշխատասիրություն ունեցող անհատների եւ միավորների համար:

Այս հայտարարությունն օրեր առաջ պաշտոնապես արել եմ երիտասարդության հետ հանդիպման ժամանակ: Ասել եմ՝ ձերն է ապագան, դուք եք երկրի տերը՝ ձեր փայլուն առաջարկներով, ձեր խանդավառությամբ, ձեր՝ երբեք չկոտրվելու վճռականությամբ. եկեք, կպեք գործին:

Նույնն այսօր ասում եմ լայն շրջանակներին: Եթե ունեք ցանկություն, պատրաստակամություն՝դժվար աշխատանքի, ընդունում եք «Առաջարկ Հայաստանին» ծրագրի գաղափարները, պատրաստ եք ձեր առաջարկներով եւ ներկայությամբ ուժեղացնելու այդ ծրագիրը, ապա ես պատրաստ եմ համատեղ աշխատանքի»:

● *Փետրվարի 2-ից 9-ը Երեւանի պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 5683 խախտում՝ պահպանվող հատուկ տարածք տեղափոխելով 224 ավտոմեքենա:*

ԼՈՒՐԵՐ

ՆԱՎԹԱՏԱՐ ԵՆ ԿԱԼԱՆԵԼ

ԱՄՆ զինված ուժերը Հնդկական օվկիանոսում կալանել եւ ստուգման են ենթարկել նավթատար նավ, որը ենթադրաբար խախտել է վառելիքի տեղափոխման արգելքի պատժամիջոցները: Այս մասին նշված է Պենտագոնի տարածած հայտարարությունում: «Զինված ուժերը գիշերն առանց միջադեպերի իրականացրել են Aquila II նավի ստուգում եւ կասեցում՝ INDOPACOM պատասխանատվության գոտում: Այն նավարկում էր՝ խախտելով Կարիբյան ավազանում պատժամիջոցների ներքո գտնվող նավերի վերաբերյալ նախագահ Թրամփի սահմանած կարանտինը»,- նշվում է հաղորդագրությունում: Տեղեկացվում է նաեւ, որ ամերիկացի զինվորականները նավը հետապնդել են Կարիբյան ավազանից մինչեւ Հնդկական օվկիանոս: Ըստ ԱՄՆ ֆինանսների նախարարության՝արտասահմանյան ակտիվների վերահսկողության վարչության՝ Aquila II-ը նավարկում է Պանամայի դրոշի ներքո:

ԴԵՌ ՇԱՏ ՃԱՆԱՊԱՐՀ ԿԱ

Ռուս-ուկրաինական հակամարտության կարգավորման շուրջ բանակցությունները շարունակվում են, առջեւում դեռ շատ ճանապարհ կա, տեղեկանում ենք ՏԱՍՍ գործակալությունից: Այդ մասին հայտարարել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը «ՆՏՎ» հեռուստաալիքին տված հարցազրույցում:

«Մենք մեկ անգամ չէ, որ ասել ենք այն մասին, որ չպետք է տրվենք տեղի ունեցողի հիացական ընկալմանը, թե ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն «իրենց տեղն է դրել» եվրոպացիներին, Վոլոդիմիր Զելենսկուն եւ նրանցից պահանջում է կատարել... Այդ ամենը լավ է, եթե մենք ցանկանում ենք խաղաղության հասնել Ուկրաինայում, բայց մենք դեռեւս այնտեղ չենք: Բանակցությունները շարունակվում են, երկրորդ փուլը տեղի ունեցավ Աբու Դաբիում, առջեւում դեռ շատ ճանապարհ կա», - ասել է նա: Նախարարի խոսքով՝ Ռուսաստանի առաջատար դիրքերը միջուկային էներգիայի համաշխարհային շուկայում մարտահրավեր են նետում ամերիկացիներին, նրանք ցանկանում են փոխել դա: «Այն երկրներում, որտեղ մենք արդեն ունենք նախագծեր, աշխատանքի փորձ, այդ թվում նաեւ մեր հարեւաններին, մի շարք եվրոպական երկրների մոտ, ամերիկացիներն աշխատում են, որպեսզի նրանց էներգետիկան վերառակավորեն իրենց ստանդարտներով: Նրանք նույնպես դա չեն թաքցնում: Արդեն չեմ խոսում պատժամիջոցների, մաքսատուրքերի մասին, որոնք մինչեւ երկինք են հասցնում այն երկրների համար, որոնք ամերիկացիներին չեն լսում այն հարցում, թե ինչպես պետք է աշխատել Ռուսաստանի Դաշնության հետ», - նշել է նա: «Մեր մոտեցումը սահմանվել է (Ռուսաստանի) նախագահի կողմից՝ ելնելով մեր ազգային շահերից: Մենք չենք ընդունում առեւտրային, տնտեսական, արժութային պատերազմների մեթոդները, որովհետեւ դոլարի չարաշահումը շարունակվում է աննախադեպ մասշտաբներով»,- ընդգծել է ՌԴ ԱԳՆ ղեկավարը:

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ

Գ

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ՄՐՑԱՆԱԿԻ

Կոնվերս Բանկն արժանացել է Mastercard-ի Excellence in Customer Experience մրցանակին: Մրցանակը Կոնվերս Բանկին շնորհվել է Mastercard համակարգի հեռ արդյունավետ համագործակցության, ինչպես նաեւ C360 բանկային ծառայությունների փաթեթների շրջանակներում հաճախորդներին մատուցվող գերազանց փորձառության համար:

Մրցանակաբաշխությունը կայացել է միջազգային վճարահաշվարկային համակարգի տարեկան միջոցառման շրջանակում, որը միավորել էր ֆինանսաբանկային ոլորտի ներկայացուցիչներին՝ նախորդ տարվա արդյունքներն ամփոփելու եւ առաջիկա ծրագրերը ներկայացնելու նպատակով:

Համագործակցության շրջանակում 2025-ին Կոնվերս Բանկն ու Mastercard-ն իրականացրել են երկու խրախուսման արշավ C360 փաթեթների օգտատերերի համար.

• Ամերիկյան առեւտրի կետերում առցանց գնումներ կատարած եւ առաքումը Գլոբբինգով կազմակերպած հաճախորդները քեշբեք են ստացել թե՛ Բանկից, թե՛ Գլոբբինգից:

• Իսկ C360 Ultra, Elite, Signature եւ Synergy փաթեթների օգտատերերը, ովքեր հանգիստն անց են կացրել Իտալիայում կամ ԱՄԷ-ում ու անկանխիկ գնումներ կատարել C360 MC World կամ MC World Elite քարտերով, ստացել են մինչեւ 100.000 ՀՀ դրամ քեշբեք Կոնվերս Բանկից:

Ներկայացնելով C360 փաթեթների ճամփորդական առավելությունները՝ Բանկում նշել են, որ դրանք հասանելիություն են ապահովում ոչ միայն բանկային ծառայություններին, այլեւ օգնում են հեշտությամբ կազմակերպել ճամփորդությունները՝առաջարկելով

• Աշխարհի ավելի քան 1200 օդանավակայանների սպասարկման սրահների մուտք՝անվճար,

• Զվարթնոց միջազգային օդանավակայանի Fast track & Business Lounge ծառայությունից օգտվելու համար հավելյալ անվճար վաուչերներ Բանկի ծառայություններից ակտիվ օգտվող հաճախորդներին,

• Ճամփորդական ապահովագրություն,

• Կոնսիերժ ծառայություն,

• Զեղչեր եւ արտոնություններ աշխարհի տարբեր երկրներում:

C360-ի շրջանակում հաճախորդներին ճամփորդական բարձրակարգ փորձառության տրամադրման նպատակով Կոնվերս Բանկը եւ Mastercard-ը առաջիկայում հանդես կգան համատեղ բացառիկ առաջարկներով:

Մանրամասն՝conversebank.am, 010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՄԱԿՐՈՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հայտնել է, որ մի քանի եվրոպացի պաշտոնակցի առաջարկել է վերսկսել երկխոսությունը Ռուսաստանի հետ: Նա հարցազրույց է տվել եվրոպական մի շարք լրատվամիջոցների:

«Ոմանց համար դեռ շատ վաղ էր ուղարկել իրենց դիվանագիտական խորհրդականներին, ինչպես դա արեցինք մենք», - Ֆրանսիայի ղեկավարի խոսքերն է մեջբերել Suddeutsche Zeitung թերթը:

Մակրոնը նկատի է ունեցել փետրվարի 3-ին իր դիվանագիտական խորհրդական Էմանուել Բոնի գաղտնի այցը Մոսկվա, որի մասին հայտնել էր Reuters գործակալությունը:

«Իմ խորհրդածությունները շատ պարզ են՝ արդյո՞ք ցանկանում ենք քննարկումը պատվիրակել ուրիշներին: Մեր աշխարհագրական դիրքը չի փոխվի, դուր է գալիս մեզ Ռուսաստանը, թե ոչ, այն նաեւ վաղը ոչ մի տեղ չի անհետանա: Այն մեր կողքին է», - նշել է Մակրոնը:

Ուստի, նրա կարծիքով, անհրաժեշտ է «կազմակերպել ռուսների հետ եվրոպական քննարկման վերսկսումը՝ չլինելով դյուրահավատ, չգործադրելով ճնշում ուկրաինացիների վրա, բայց նպատակ դնելով այդ քննարկմանը կախված չլինել երրորդ կողմից»: Դեռեւս դեկտեմբերին Մակրոնը նշել էր Մոսկվայի հետ երկխոսությունը վերականգնելու անհրաժեշտության մասին:

Ըստ El Pais թերթի, որը նույնպես ներկա է եղել Մակրոնի հետ հարցազրույցին, Ֆրանսիայի նախագահը նաեւ հայտարարել է, որ Եվրոպան ստիպված կլինի իր «անվտանգության նոր ճարտարապետությունը կառուցել Ռուսաստանի հետ միասին»:

ԹՐԱՄՓԸ ՍՊԱՌՆԱՑԵԼ Է

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ կխոչընդոտի Կանադայի Օնտարիոյի նահանգից դեպի ԱՄՆ-ի Միչիգանի նահանգ կամրջի բացմանը, մինչեւ ԱՄՆ-ն չստանա կամրջի սեփականության իրավունքի կեսը: Այս մասին նա գրել է Truth Social հարթակում:

Թրամփը նշել է, որ Կանադան է կամրջի եւ՛ կանադական, եւ՛ ամերիկյան հատվածի սեփականատերը:

«Ես թույլ չեմ տա, որ այս կամուրջը բացվի, մինչեւ Միացյալ Նահանգները չստանա լիարժեք փոխհատուցում մեր կողմից նրանց տրված ամեն ինչի համար, եւ, ամենակարեւորը, մինչեւ Կանադան Միացյալ Նահանգներին չվերաբերվի այն արդարությամբ եւ հարգանքով, որին մենք արժանի ենք: Մենք անմիջապես կսկսենք բանակցություններ: Հաշվի առնելով այն ամենը, ինչ մենք նրանց տվել ենք՝ մենք, հավանաբար, պետք է դառնանք այս ակտիվի առնվազն կեսի սեփականատերը», - գրել է Թրամփը:

Նա ստեղծված իրավիճակի համար մեղադրել է ԱՄՆ նախկին նախագահ Բարաք Օբամային՝ նշելով, որ նա է թույլ տվել, որ Կանադան կարողանա շրջանցել «Գնել ամերիկյան» օրենքի գործողությունը եւ չներմուծել ամերիկյան ապրանքներ, ինչի պատճառով տուժում են ամերիկյան արտադրողները:

ԱՄՆ նախագահը եւս մեկ անգամ քննադատել է Չինաստանի հետ առեւտրային համաձայնագիր կնքելու Կանադայի իշխանությունների մտադրությունը՝ նշելով, որ Չինաստանը «ողջ-ողջ կուտի Կանադային»:

Կամուրջը կկապի ԱՄՆ Միչիգանի նահանգի Դետրոյթ քաղաքը Կանադայի Օնտարիոյի նահանգի Վինձոր քաղաքի հետ: Կամրջի շինարարության արժեքը գնահատվում է ավելի քան 4 միլիարդ դոլար: Շինարարությունը ֆինանսավորվում է Կանադայի դաշնային կառավարության կողմից, եւ ակնկալվում է, որ վճարները կծածկեն այդ ծախսերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԵՐԱԶԱՅԻՆ

ԱԳՆԵՇԿԱ ԱՊՈԶՆԱՆՍԿԱՅԻ «ՊԱՍԻԹԵԱ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Ագնեշկա Ապոզնանսկայի «Պասիթեա» ցուցահանդեսում դիտողը ներգրավում է իր բոլոր զգայարանները: Պասիթեան ֆնի ասծո կինն է, եւ ցուցահանդեսում նկարչուհին ուսումնասիրում է հանգստի թեման:

Ինչպես տեղեկանում ենք EWRONEWS-ից՝ Վարշավայի Լոտնա պատկերասրահում Ագնեշկա Ապոզնանսկայի «Պասիթեա» ցուցահանդեսի այցելուների համար առաջինը բույրն է: Չնայած ցուցահանդեսը հիմնականում նկարչական է, կազմակերպիչները հրավիրել են օծանելագործի՝ տեսողական փորձը լրացնելու մի շարք այլ զգացողություններով:

Ագնեշկա Ապոզնանսկան խոստովանում է, որ միաժամանակ մի քանի նկարների վրա աշխատելով՝ նա, ի վերջո, հավաքում է մի հանելուկ: Նկարչուհին ցանկանում է, որ դիտողը խաղա այս խաղը. «Յուրաքանչյուր հաջորդ աշխատանքի հետ ես խաղաղություն էի գտնում ինչ-որ այլ բանի մեջ՝ խորհրդանիշի, գույնի ինտենսիվության կամ մարմնի տարբեր բեկորի մեջ: Եվ յուրաքանչյուր աշխատանք ինձ մի փոքր ակնարկ էր տալիս այն մասին, թե ինչպիսին կլինի հաջորդը»:

Ագնեշկա Ապոզնանսկայի աշխատանքներում գերակշռում են վարդագույն երանգները: Նրա համար այս գույնն ունի բազմաթիվ իմաստներ:

«Այս աշխատանքները շատ երազային են, երազային: Ագնեշկան իր նկարներում մշուշոտում է ուրվագծերը. սա նրա բնորոշ գիծն է: Եւ հենց այս մշուշոտության եւ պատկերված իրավիճակների որոշ չափով անիրատեսական բնույթի վրա է, որ մենք կառուցեցինք «Պասիթեա» ցուցահանդեսը: Մենք ցանկանում էինք, որ այն լինի հանգստի հրավեր, բայց նաեւ թողնելու որոշակի դիրք, դիմակ, որը մենք կրում ենք ամեն օր», - բացատրում է ցուցահանդեսի կազմակերպիչը:

Ցուցահանդեսում նույնքան կարեւոր է վարագույրի մոտիվը, որը բացահայտում է նկարչի մշուշոտ աշխարհը:

«Ինձ համար սա մի գույն է, որը միաժամանակ շատ կանացի է, կարծրատիպային կանացի, քանի որ վարդագույնը ավանդաբար ասոցացվում է աղջիկների հետ, բայց միեւնույն ժամանակ այն կապված է մտերմության, մոր արգանդի ջերմության, մաշկի եւ ուժեղ ֆիզիկականության հետ: Յուրաքանչյուր աշխատանքում ես այն ուսումնասիրում եմ մի փոքր այլ ուղղությամբ՝ փորձելով բացահայտել այս գույնի մտերիմ, երբեմն զզվելի որակները: Կեղտոտ վարդագույնը կարող է առաջացնել քերծվածքներ, թեքվել դեպի արյուն, առաջացնել անհանգստություն եւ, մյուս կողմից, առաջացնել ջերմության, սիրո եւ այս գույնի նյութականության զգացողություններ», - ասում է նկարիչը:

Նկարչուհին խոստովանում է, որ վերնիսաժը այն քիչ պահերից մեկն է, երբ նա կարող է միաժամանակ տեսնել իր նկարները այդքան մեծ թվով եւ մի փոքր խաղալ դրանց հետ:

Նկարիչը կցանկանար, որ դիտողը միանար այս խաղին: «Այսինքն՝ քայլելիս նրանք կփնտրեին այս պատմությունը եւ այս մոտիվը, որը շարունակվում է աշխատանքից աշխատանք: Որպեսզի նրանք նայեին մեկ նկարին եւ մի պահ անց շարունակեին իրենց միտքը հաջորդի վրա: Ճիշտ այնպես, ինչպես ես եմ անում իմ գործընթացում», - խրախուսում է նա:

Ագնեշկա Ապոզնանսկայի «Պասիթեա» նկարչական ցուցահանդեսը բաց է Վարշավայի Լոտնա պատկերասրահում մինչեւ մարտի 6-ը: Սուրբ Վալենտինի օրը՝ փետրվարի 14-ին, Վրոցլավում բնակվող նկարչուհին անձամբ կղեկավարի շրջագայություն բոլորի համար:

Վարագույրի մոտիվը նույնպես հայտնվում է ցուցահանդեսում: Դա վարդագույն, շրջանաձեւ, թափանցիկ վարագույր է, տեղադրված նկարների միջեւ, որի միջով կարելի է տեսնել մշուշոտ աշխարհ՝ այնպիսին, ինչպիսին Ագնեշկա Ապոզնանսկան պատկերում է իր աշխատանքներում:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵ՞Ն ԱՅԼՄՈԼՈՐԱԿԱՅԻՆՆԵՐ

Սթիվեն Սփիլբերգը վերադառնում է մանկուց իրեն հետաքրքրող թեմային՝ այլմոլորակայիններին կյանքին: Երեկ Universal Pictures-ը թողարկել է Disclosure Day ֆիլմի կուլիսներից մի տեսանյութ, որտեղ 79-ամյա ռեժիսորը քննարկում է անհասկանալիի նկատմամբ իր վաղեմի հետաքրքրությունը:

«Ես միշտ հիացել եմ այն բաներով, որոնք հնարավոր չէ բացատրել: Ես շատ ֆիլմեր եմ նկարահանել այն բաների մասին, որոնք գերազանցում են սովորականը՝ շնաձկներից մինչեւ թռչող ափսեներ», - ասում է Սփիլբերգը տեսանյութում: Նա ասում է, որ դեռ մանկուց երկար ժամանակ նայել է գիշերային երկնքին եւ ավելի ու ավելի է համոզվել, որ Երկրից այն կողմ կյանքը վարկած չէ, այլ անխուսափելիություն:

«Ոչ միայն հնարավորություն է, այլ երաշխիք, որ կյանք գոյություն ունի մեր մոլորակից այն կողմ», - ընդգծում է ռեժիսորը:

Սփիլբերգը Disclosure Day ֆիլմի առաջին կադրերը հրապարակել է դեռեւս դեկտեմբերին: Ֆիլմում նկարահանվել են Էմիլի Բլանտը, Ջոշ Օ'Քոնորը, Քոլին Ֆերթը, Իվ Հյուսոնը եւ Քոլման Դոմինգոն: Նախագիծը հիմնված է ռեժիսորի կողմից ստեղծված ինքնատիպ գաղափարի վրա, իսկ սցենարը գրել է Դեյվիդ Քեփը՝ «Յուրայի դարաշրջանի այգի» եւ «Աշխարհների պատերազմ» ֆիլմերի ռեժիսորը:

Նոր տեսահոլովակում Սփիլբերգը հարցեր է բարձրացնում, որոնք, նրա կարծիքով, այսօր մտահոգում են միլիոնավոր մարդկանց: «Հետաքրքրությունը ոչ միայն մեր երկնքում, այլեւ մեր իրականության մեջ տեղի ունեցողի նկատմամբ հասել է կրիտիկական կետի: Մենք բոլորս հարցնում ենք. մենա՞կ ենք տիեզերքում: Եւ եթե ինչ-որ մեկը գիտի, որ մենք մենակ չենք, ինչո՞ւ դեռ չի ասել մեզ»:

Ֆիլմի սյուժեն ներկայումս գաղտնի է պահվում, բայց հայտնի է, որ այն կպտտվի այլմոլորակայինների գոյության պաշտոնական հաստատման շուրջ: Նախագծի նկարագրության մեջ ասվում է. «Եթե ձեզ ապացուցեին, որ մենք մենակ չենք, դա կվախեցնե՞ր ձեզ: Այս ամռանը ճշմարտությունը կբացահայտվի 7 միլիարդ մարդու համար: Մենք մոտենում ենք... Բացահայտման օրվան»:

Նոր ֆիլմը ռեժիսորի վերադարձի տպավորություն է թողնում իր մանկության վախերին ու ֆանտազիաներին՝ շատ նման նրա նախորդ՝ «Ֆաբելմանները» ֆիլմին, որը ոգեշնչված էր անձնական պատմությամբ:

Disclosure Day-ը կթողարկվի հունիսի 12-ին:

«ԱՊՏԱԿ ՄԵՐ ԵՐԿՐԻ ԴԵՄՔԻՆ»

Նախագահ Դոնալդ Թրամփը մեղմ քննադատություն է հնչեցրել Bad Bunny-ի Super Bowl LX-ի ընդմիջման ելույթի վերաբերյալ՝ այն անվանելով «բացարձակապես սարսափելի, վատագույններից մեկը»:

Սոցիալական ցանցերում գրառման մեջ Թրամփը շոուն անվանել է «ապտակ մեր երկրի դեմքին» եւ որ դրանում «ոչ մի ոգեշնչող բան չկա»: «Դա անհեթեթություն է, վիրավորանք Ամերիկայի մեծության նկատմամբ եւ չի արտացոլում մեր հաջողության, ստեղծագործականության կամ գերազանցության չափանիշները: Ոչ ոք չի հասկանում, թե ինչ է նա ասում, եւ պարը զզվելի է, հատկապես երկրի տարբեր ծայրերից եւ աշխարհից հետեւող երեխաների համար», - ավելացրել է Թրամփը:

Պուերտոռիկացի կատարողը հուզիչ շոու էր կազմակերպել Սանտա Կլարայի (Կալիֆոռնիա) «Լեւիի» մարզադաշտում՝ կատարելով իր հիթերը հիմնականում իսպաներենով: Շոուն գագաթնակետին է հասել Ամերիկաների՝ Չիլիից մինչեւ Կանադա մեծ ցուցադրությամբ, որը հասել է Պուերտո Ռիկոյին՝ արտիստի հայրենիքին: Իր ելույթի սկզբում Բադ Բաննին դիմել է հանդիսատեսին՝ ընդգծելով ինքդ քեզ հավատալու կարեւորությունը. «Երբեք, երբեք մի դադարիր ինքդ քեզ հավատալ, եւ դու նույնպես պետք է հավատաս ինքդ քեզ»:

Արտիստը ելույթ է ունեցել Կարիբյան ավազանը խորհրդանշող շաքարեղեգի դաշտերի թեմայով բեմում եւ կանգ առել պիրավուա պաղպաղակի կրպակի մոտ: Նրա կատարած երգերի թվում էին նրա հիթերը՝ «BAILE INoVIDABLE» եւ «NUEVAYoL», որոնք նա կատարել է Լա Մարկետա շուկայի մակետի ֆոնին:

Լեդի Գագան բեմ է բարձրացել «Die With a Smile» երգի սալսա տարբերակով, ինչպես նաեւ Ռիկի Մարտինը: Կուլմինացիոն պահին Բադ Բաննին բեմի վրա գտնվող երիտասարդ երկրպագուին նվիրել է գրամոֆոն, եւ շոուն ավարտվել է նրա «DtMF» հիթի ցնցող հրավառությամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՎԻՐԱՀԱՏՎԵԼ Է

Անգլիայի փոխչեմպիոն Լոնդոնի «Արսենալի» եւ Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի հավաքականի կիսապաշտպան Միկել Մերինոն վիրահատվել է ոտնաթաթի ծանր վնասվածքից հետո, որը ստացել էր «Մանչեսթեր Յունայթեդի» դեմ Անգլիայի Պրեմիեր լիգայի 24-րդ տուրի խաղում (2:3): «Վիրահատությունն ավարտված է, արդեն գրեթե պատրաստ եմ վերադառնալ: Շնորհակալություն բոլոր հաղորդագրությունների եւ սիրո համար: Դա իսկապես մեծ էներգիա է տալիս, որպեսզի հաղթահարեմ այս մարտահրավերը»,- սոցիալական ցանցերում գրել է Միկել Մերինոն: Ընթացիկ մրցաշրջանում 29-ամյա ֆուտբոլիստը մասնակցել է 33 հանդիպման, խփել է 6 գոլ, կատարել 3 գոլային փոխանցում:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» նախագահ Ժոան Լապորտան եւ ակումբի կառավարման խորհրդի մյուս անդամները հրաժարական են ներկայացրել, որպեսզի հնարավորություն ունենան մասնակցելու կատալոնական ակումբի ղեկավարության նոր ընտրություններին, որոնք նշանակվել են մարտի 15-ին: Հաղթողը հուլիսի 1-ին կզբաղեցնի իր պաշտոնը: Մինչ այդ «Բարսելոնան» կղեկավարի ակումբի փոխնախագահ Ռաֆայել Յուստեն:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Օրեր առաջ հայ ընթերցողին ներկայացվեց հայկական ֆուտբոլի լեգենդ, ազգային թիմի նախկին ավագ հեներիխ Մխիթարյանի կենսագրական գիրքը՝ «Իմ կյանքը՝ միշտ կենտրոնում», որը հայերեն հրատարակել է NewMag հրատարակչությունը: Ալեսանդրո Ալչիատոյի համահեղինակությամբ գրված գրքի բնօրինակը իտալերեն է: Գիրքն ունի 25 գլուխ: Այն պատմություն է որդիական կարոտի եւ հոր՝ Համլետ Մխիթարյանի մասին: Գրքի շնորհանդեսի ժամանակ Հենրիխ Մխիթարյանը հանդես եկավ ուղերձով. «Այս գիրքն իմ կյանքի պատմությունն է, բայց այն գրել եմ ոչ միայն իմ մասին, այլ նրանց մասին, ովքեր երազում են, պայքարում են, ովքեր երբեմն ընկնում են, բայց չեն հանձնվում: Այն իմ մանկության, ընտանիքի, դժվար որոշումների ու ցավոտ պահերի մասին է»,-ասաց Մխիթարյանը:

ՎԵՐՍԿՍԵՑ ՄԱՐԶՈՒՄՆԵՐԸ

Պորտուգալացի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն վերսկսել է մարզումները սաուդյան «Ալ Նասրի» կազմում, հաղորդում է պորտուգալական A Bola-ն: Այդուամենայնիվ, Ռոնալդուն չի մասնակցի Թուրքմենստանի «Արկադագի» դեմ հանդիպմանն Ասիայի Չեմպիոնների լիգայում: Այդ հանդիպումը տեղի կունենա փետրվարի 11-ին: Նրա վերադարձը խաղադաշտում սպասվում է փետրվարի 14-ին «Ալ Ֆատեհի» դեմ հանդիպմանը Սաուդյան Արաբիայի առաջնությունում: Ռոնալդուն դժգոհ է Սաուդյան Արաբիայի ներդրումային հիմնադրամի քաղաքականությունից: Այդ հիմնադրամին են պատկանում «Ալ Նասր», «Ալ Իթիհադ», «Ալ Հիլալ», «Ալ Ահլի» ակումբները: Ռոնալդուն բոյկոտել է «Ալ Նասրի» նախորդ երկու հանդիպումները:

● *Փետրվարի 11-ին՝ ժամը 19:00-ին, Կ. Ստանիսլավսկու անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Ցանկապատ» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Կարինե Մարգարյան, 47 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարինե Մարգարյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն): Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում ամուսնալուծության պետական գրանցման համար:

Շուշաննա Գաբրիելյան, 47 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել՝

1) ամուսնալուծվողի (ամուսնալուծվողների) անձը հաստատող փաստաթղթերը կամ դրանց պատճենը,

2) ամուսնության պետական գրանցման վկայականը՝ առկայության դեպքում, կամ ամուսնության պետական գրանցման մասին տվյալներ՝ գրանցող մարմինը, վայրը եւ ժամանակը,

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը կամ դրա քաղվածքը՝ ամուսիններից մեկին անհայտ բացակայող ճանաչելու մասի,

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը կամ դրա քաղվածքը՝ ամուսիններից մեկին անգործունակ ճանաչելու մասին,

5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի պատճենը կամ դրա քաղվածքը՝ ամուսիններից մեկին ազատազրկման դատապարտելու վերաբերյալ,

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծությունը գրանցելու մասին,

7) անգործունակ անձի նկատմամբ օրինական ներկայացուցիչ նշանակվելու մասին իրավասու մարմնի որոշման պատճենը:

8) Ամուսնալուծության պետական գրանցման դիմումը լիազորված անձի միջոցով ներկայացվելու դեպքում նաեւ ներկայացվում է անձի լրացրած եւ սահմանված տեղեկությունները պարունակող դիմումը՝ հաստատված նոտարական կարգով:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնալուծության պետական գրանցումը կատարվում է ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո: Ամուսնալուծության պետական գրանցման համար ներկայացված դիմումը ուժի մեջ է վեց ամսվա ընթացքում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Աբովյան փողոցում

Փողոցում իրականացվում են ամենօրյա մաքրման աշխատանքներ՝ պահպանելու քաղաքի մաքուր ու կոկիկ տեսքը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-3 - 8 - 2 + 2
Կոտայքի լեռներ	- 4 - 7 - 1 + 2
Կոտայքի նախալեռներ	- 2 + 1 + 2 + 5
Գեղարքունիք	- 3 - 7 - 2 + 1
Լոռի	- 3 - 7 - 3 + 2
Տավուշ	- 2 - 6 - 2 + 2
Արագածոտնի լեռներ	- 4 - 7 - 2 + 1
Արագածոտնի նախալեռներ	- 1 + 2 + 1 + 5

Արարատ	0 + 3 + 4 + 6
Արմավիր	0 + 3 + 4 + 7
Վայոց ձորի լեռներ	-4 - 7 - 1 + 2
Վայոց ձորի նախալեռներ	0 + 3 + 5 + 7
Սյունիքի լեռներ	-4 - 8 - 1 + 3
Սյունիքի նախալեռներ	- 4 - 7 0 - 3
Սյունիքի հովիտներ	- 1 - 4 + 3 + 6
Երեւան	- 1 + 1 + 4 + 6

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*